ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների ուղղություններով տարանցիկ փոխադրումների զարգացման պայմանների մասին» Համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության

«ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների ուղղություններով տարանցիկ փոխադրումների զարգացման պայմանների մասին» Համաձայնագրի նպատակը վերոնշյալ ուղղություններով միջազգային տարանցիկ փոխադրումների զարգացման բարենպաստ պայմանների ձևավորումն է ավտոմոբիլային, երկաթուղային և ջրային (ծովային, գետային) տրանսպորտի տեսակներով, ինչը խթան կհանդիսանա ազգային տրանսպորտային համակարգերի մրցունակության բարձրացման գործում:

Սույն Համաձայնագրի կնքումը բխում է ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված 2008 թվականի նոյեմբերի 14-ի 2020թ. ժամանակահատվածի համար տրանսպորտային ոլորտում ԱՊՀ մասնակից-պետությունների համագործակցության առաջնահերթ ուղղություններից, 2009 թվականի նոյեմբերի 20-ի «ԱՊՀ մասնակից-պետությունների տարածքով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների համաձայնեցված զարգացման մասին» Համաձայնագրի, ինչպես նաև 1999 թվականի հունիսի 4-ի «ԱՊՀ մասնակից պետությունների տարածքով տարանցման կարգի մասին Համաձայնագրի» դրույթներից:

Համաձայնագրի կնքումը բխում է Եվրասիական միության տարածքում միջազգային տրանսպորտային ենթակառուցվածքների հետագա զարգացմանն ուղղված միջազգային (տարանցիկ) փոխադրումների իրականացման երաշխավորության բարձրացման և անխափանելիության ապահովման կարևորությունից:

Համաձայնագրի դրույթների իրականացումը կհանգեցնի ԱՊՀ մասնակից-պետությունների տարածքներով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների տարանցիկ ներուժի բարձրացմանը:

Միջազգային տարանցիկ ավտոմոբիլային բեռնափոխադրումների ինքնարժեքի և ժամկետների նվազեցման նպատակով Համաձայնագրի շրջանակներում կողմերը կնվազեցնեն մասնակից-պետությունների փոխադրողների կողմից միջազգային տրանսպորտային ենթակառուցվածքի օգտագործումը սահմանափակող վարչական, ֆիսկալ, տեխնիկական, մերձսահմանային խոչընդոտների բացասական ազդեցությունը:

Միևնույն ժամանակ ԱՊՀ ՄՏՄ երկաթուղային ուղիներով բեռների միջազգային տարանցիկ փոխադրումների իրականացման համար կձևավորվեն կայուն և երկարաժամկետ սակագնային պայմաններ:

Համաձայնագրի կնքումը կնպաստի արդյունավետ սակագների քաղաքականության մշակմանը, տարանցիկ փոխադրումների շուկայի ազատականացմանը, մուլտիմոդալ փոխադրումների իրականացման օպտիմալացմանը, տրանսպորտային-տեխնոլոգիական սխեմաների ձևավորմանը, լոգիստիկ տեխնոլոգիաների զարգացման նպատակով ինովացիոն տեխնոլոգիաների և ներդրումների ներգրավվածությանը, ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում ենթակառուցվածքային օբյեկտների զարգացմանն ուղղված տարբեր ձևաչափի ներդրումային նախագծերում մասնակցությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը նպատակահարմար է գտնում «ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների ուղղություններով տարանցիկ փոխադրումների զարգացման պայմանների մասին» Համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ **Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**